

4094

Թիվ 8<sup>ա</sup> Հայաստանի Խորհրդային Հանրապետության  
Պրոլետարիական պոլիտիկական միացելք:

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱԿԱՆ ՍՏԵՂԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մասնակցութ են

Բանագործութեար.  
Ա. Դասենի.  
Վ. Ֆիդյորի.  
Ա. Սամօրխոնի.  
Ա. Պամուկչի.  
Մազօքինի.  
Օրբելիա-Օրբելիանի.  
Ի. Քոլութ.  
Եղոնին:

Գիր 1.

Գ01.940.

Թիվ 19 — 1921

Пролетарии всех стран — соединяйтесь!

На армянск. яз.

## 1786 Пролетарское творчество

891.71

1—94

КНИГА I  
Поэзия

автвуют:

А. Гастев, В. Кирилов, С. Самобытник, А. Поморский, Садофеев, Клявс-Клявина, И. Ионев, Ерошин.

ТИФЛИСЪ — 1921

I Ա.	Գաստելից—	
1.	Մենք աճում ենք հրկաթից	3
2.	Շնչակները	4
3.	Իմ կեանքը	4
4.	Դարպասները	6
5.	Մենք ձեռնամուխ եղանք	9
6.	Աշխատանքի հրաշքներ	11
II Վ.	Կիրթլովից—	
7.	Կարմիր Պետրօգրադ	16
8.	Ապագայն,	17
9.	Օտար եղբօրս	18
10.	Գալիք պօէտին	19
11.	Երկաթէ Մեսսիա	20
12.	Կորլ Մարքոսի յիշատակին	21
III Ա.	Պամուկուց—	
13.	Թագում	22
14.	Սպասութեր դարուց	25
IV Ո.	Սամօթիքիկից—	
15.	Գործարանում	26
16.	Կոչ	27
17.	Նոր ընկերոջը	28
18.	Կինը	29
V Կիեավո-Կիեավիինից—		
19.	Աշխատանքի սէրը	30
VI Ի.	Խօնուից—	
20.	Դարրին	31
VII Երօնինից—		
21.	Եփրեմովի յիշատակին	32

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻՆ, ՄԻԱՅԵՒՄ

891.71  
Դ - 94

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ  
ԱՏԵԼԵԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

100/  
3539

Մասնակցում են՝

Թանաւոր-գրողներ.  
Ակուշ-Աշխատվ (Սարօնիկ),  
Ա. Գասենիվ.  
Ի. Խոնդիզ.  
Ա. Կիրեվով.  
Ա. Սամօթիքիկ.  
Ա. Պամուկի  
և ուրիշներ:

Փիրֆ I.

2003.

Պօեզիա.

Թիգլիզ  
1920

3530  
12060-58ան



29187-42

## ԳԱՍՏԵՒՅՑ

1

ՄԵՆՔ ԱԼՈՒՄ ԵՆՔ ԵՐԿԱԹԻՅ

Նայեցէք, — Ես կանգնում եմ նրանց մէջ՝ ճախա-  
րակների մուրձերի վագրան-վառարանների, հնոցների,  
և հարիւրաւոր ընկերների մէջ:

Բարձրում երկաթակուռ տարածութեան և  
ընդարձակ:

Կողքերից վերանում են քառանկիւնի գերաննե-  
րըն ու անկիւնակները:

Նրանք բարձրանում են տառը սաժէն:  
Կըում են աջից ու ձախից:

Զեզունակալներով գմբէթներում միանում են և  
ինչպէս ուսերը հսկայի, ամուր պահում ամբողջ երկա-  
թէ շէնքը:

Նրանք սրբնթաց են, նրանք թափկոտ են և ուժեղ:  
Նրանք աւելի մեծ ոյժ են պահանջում:  
Ես դիտում եմ նրանց ու հզարտանում:  
Զղերիս մէջ, զգում եմ, հոսում է նոր երկաթեայ  
արիւն.

Ես աճում եմ էլ աւելի:

Ինձ մօտ անակնկալի նման պողպատէ ուսեր և  
անսահման ուժեղ ձեռքեր են բնում:

Ես շէնքակառոյց երկաթին եմ ձուլւել,  
Բարձրացել եմ ու բարձրացնում ուսերովս զե-  
զունակալները, գերաններն ու տանիքը:  
Ճիշտ է ոտքերս հողի վրայ են, բայց զուխս բար-  
ձրացել է շէնքից.

Ես դեռ շնչասպառ հեռում եմ այս վերմարդկային  
ճիկերից և արգէն ազաղակում եմ.

— «Խօսք եմ խնդրում, ընկերներ, խօսք...»:



12060-589

Երկաթէ արձագանքը ծածկում է իմ խօսքերը, ամբողջ շէնքը դողում է անհամբերութիւնից. ես բարձրացել եմ էլ աւելի. ես արդէն հաւասարւել եմ ծըխնելոյզներին:

Ու ոչ թէ հէքեաթ, կամ ճառ, այլ միայն մի խօսք, երկաթէ խօսքն եմ աղաղակում ես.

— «Մենք յաղթելու ենք»:

II

Շ Զ Ա Կ Ն Ե Բ Հ Ը

Երբ բանւորական ծայրամասերում շչում են առաւտւայ շշակները, այդ բովորովին կոչ չէ դէպի ստրկութիւնը. Այդ երգն է ապագայի:

Նեղ և անցուկ ալբնստանոցներում երբեմն աշխատում էինք մենք և առաւտաները տարբեր ժամանակներում էինք սկսում մեր աշխատանքները:

Իսկ այժմ... այժմ առաւտեան ութիւն ճշում են շշակները ամբողջ միլիոնի համար:

Ի՞նչ են երգում շշակները...

Ամբողջ մի միլիոն միաժամանակ իրենց ձեռքն են առնում մուրճերը.

Առաջին մեր հարւածները թնդում են միասին.

— Առաւտեան ներբողը մեր միութեան:

III

Ի Մ Կ Ե Ա Ն Ք Ը

Մեծ է անցեալում, անվախճան է ապագայում իմ կեանքը: Ես շատ հարիւրամեակներ եմ մոռացել: Յիշում եմ միայն, երբ քայլում էի շղթայւած և կապւած էի իմ բանտին—աշխատանքին:

Այդ ես—երկու հարիւր տարի առաջ—հարւածել և ջարդել եմ իմ մեքենաները: Այդ ես, ամբողջովին դեռ մարդկայնական, ծառացայ իմ ցուրտ ցաւերի զէմ: Այդ ժամանակ ես տւել եմ իմ ամբողջ կերպը:

այդ ելիաթէ մենամարտին, միմիայն գլուխս չեմ կորցրել այդ պայքարում: Այն ժամանակ ես խիզախացած յարձակում էի մեքենաների յուսահատ կըտրիչների վրայ, բրդում էի նրանց. սակայն ինքս էլ ջարդում էի մետաղի ճնշումներից:

Այդ ես, հարիւր տարի առաջ, ներկեցի իմ արիւնով համաշխարհային քաղաքների փողոցները և ծածանեցի գրօշտկները վրէժի և ապստամբութեան խօսքերով:

Այդ հէնց ես եմ յետոյ ջարդել և տանջել իմ սեպհական սալմինը սահմանի այս ու այն կողմում:

Եւ այժմ դարձեալ ես, և արդէն կարծես թէ նորից ծնւած դնում և կառուցում եմ: Ամեն ինչ իմ ձեռքով և գործիքներով է անցնում, կառուցած եմ ձորերն ու կիրճերը հարթող կամուրջներ, մեքենաներ, մանրաղէտներ:

Իմ յենարանի սրաաղարկի և երակացանցի միջոցով զգում, ըմբռնում եմ ամենախորհրդաւոր մաքերը:

Ես—կրոյն եմ զիտակցութեան անողոք կտրիչի:

Ամեն տեղ գնում եմ իմ մուրճի, երկաթահատի և երկաթափորի հետ: Ամբողջ աշխարհով: Քայլում եմ սահմաններով, անցնում եմ մայր ցամաքներն ու ովկիանոսները: Ամբողջ աշխարհը իմ հայրենիքն եմ գալճնում:

Կանգնած եմ Բերլինում բանւորական տան առաջ: Կանգնած եմ և հրճում եմ ահա իմ հսկայական, ծանրադիր, անսահման ուժեղ տան վրայ: Եւ ամեն ինչ նրա մէջ իմն է: Եւ մուտքի կամացը քանդակւած մուրճով, որ աճում է քարից և երգ է հայցում, և կուսնը քարտուղարի սեղանին ընկած և ընկերներից յետ և առաջ ընթացող շաշքերը՝ իմն են:

Մտնում եմ Մանչեստրի կօսպերատիվը և դողում եմ հրճանքից: Իմն է ծնւած հնուում, բայց համագրութեամբ իմ հարաղատին հարազատ:

Ես Փարիզեան Աշխատանքի Բօրսայի ու կամաբաների տակ եմ սկզբում օտար, կառուցւած օտար, ոչ բանւորական փողերով. նա մերն է դարձել և նրա ծխամած պատերը դարձել են յոգնած ոյժերի պոպթեման սիմվոլը:

Դժբախտութիւն... Փոս է... Գերեզման... Հարաւային Աֆրիկայում պայթում է, — հազարաւոր զոհեր... Այդ հարւածն է, այդ հարւածն է ուղիղ իմ սրտի մէջ:

Անծուխ շախտերը ծածկւած մոխիբների տակ... Այդ երկրի ծայրումն է յուշարձանը իմ վիրաւոր, իմ համաշխարհային սրտի:

Մեռել է իմ երէկը, սլանում է իմ այսօրը և արդէն ժայթքում են կրակներն իմ վաղաւայ:

Չեմ ափսոսում մանկութեանս համար, վիշտ չկայ իմ պատանեկութեանս մէջ և միտյն դէպի հեռուն:

Ես ոչ թէ տարիներ եմ ապրում,

Ես ապրում եմ հարիւրաւոր, հազարաւոր տարիներ,

Ես ապրում եմ աշխարհի ստեղծագործութեան օրերից

Եւ ես պիտի ապրեմ դարձեալ միլիոնաւոր տարիներ:

Եւ իմ վազքին չի լինելու սահման:

#### IV

#### Դ Ա Ր Պ Ա Ս Ն Ե Ր Ը

Ամբողջ մի տարի չեմ տեսել ես ձեզ: Դողում և վազում եմ դէպի ձեզ, սև ծինելոյզներ, առանձնազիբ շինութիւններ, շատուններ, գլաններ,

Պատրաստ եմ խոսելու ձեզ հետ, բարձրացնելու ձեր առաջ ձեռներս, ներբողելու ձեզ, իմ երկաթէ ընկերներ...

Եւ շնչում եմ առաօտւայ արեգակը, ես ոսկէ

պատանեկութիւնն եմ ապրում, իմ առաջ տարածում է անվախճան հրաշալին:

Գնում եմ գործարան, որպէս թէ տօնի, իւրախճանի:

Բանւորական քաղաքը թաղւած է ճաճանչների մէջ, հալչում է զիշերային խաւարը, թափում են ձիւնի հիւսերը, ծով է, ձիւնակոյտերն է կրակոտ ու գործարան է հեացող ու վառող:

Զեզունականները կրակներ են ուղարկել դէպի դաշտերն ու ձորերը, բոցավառել հազարաւոր մարգարտէ յուղոնքները՝ ցուրտ ցողի:

Կախւած լապտերները նիրճող ճահիճներն են, զարթեցրել: Դեռ երեկւայ համըերը շարժում են, խօսում, լուսաւոր հէքեաթների շուկն է սահում բոշխերում:

Իսկ աշտարկից ուղիղ դէպի հեռու նրա ճերմակ շիթերը, ինչպէս ցնչուղը շիկացած մետաղի, ինչպէս խլացած որուց վառւած վառողի, հեղեղել են անտառնաները: Անտառն են մտել խելառ ստուերները, թոչունները չտեսնեած աղմուկ են բարձրացրել և, ինչպէս միտինզի հաւաքւած մարդիկ, աղաղակում են: Զանէլները երգեցին գարնան երգը, հեռում լաւում էր ճոխն աւտոմոբիլների. այդ ծափերն են վարագոյրի բացւը առաջ: Ճանապահները շաշեցին անդրեկրեայ տրառնջի աքտաւաներով: Արձակւեցին լեզւակները և հարիւրաւոր ահազանգեր զօղանջեցին քաղաքի վրայ: Ահա, ահա նոր լոյս կըրացւի—արգրկելի, չտեսնեած, աներեկակայելի լոյս, լոյս... Սև ջրվէժի պէս սուզւում է ամբոխը գործարանի խորքերը: Ծովածոցի հզօրները աներկիւլ, առանց թարթելու վերցնում են ամենը, կլանում են, կլանում...

Հարիւրը... երկրորդ հարիւրը... երրորդը...

Հազարը...

Երկրորդ հազարը...

Եւ էլի... և էլի...

Մենք բակումն ենք...

— Հովանաւորող ոյժը երկաթի...

Հազիւ մտայ և արդէն կայծակի, շարժման, լոյսի  
տարերքներով առանց մնացորդի գերւած, նւաճւած է:  
Խանդավառ հհծկւում և որոտում է օդը, գործարանի  
երկաթէ հոգին ձեղքում է ամրոխին: Կուրծքը շշում  
է մետաղի դողոցով: Առանձնաղիք շէնքերում սկսել  
է ծանրակշիռ շփոթութիւնը:

Եւ ամեն ինչ աւելի ծանր, աւելի բարձր...

Շէնքաշարքերը կըպատռեն, կըփւեն: Նրանք այս  
ըոպէիս կըվերանան իրենց տեղերից, կըպայթեն: Կըծա-  
ւալւի կատաստրօֆուն, հողափորշերից կըժայթեն հա-  
լած մետաղի շաղբւանները:

— Հապա որոտա, որոտա—մենք պատրաստ ենք,  
մենք բակումն ենք, մենք արդէն ուրիշ ենք:

Ամրոխը ընթանում է նոր քայլերգով, նրանց  
ոտները վարժւել են երկաթէ տեմպին:

Զեռքներն այրւում են, նրանք չեն կարող մնալ  
առանց գործի, նրանք չեն համբերի առանց մուրճի,  
աշխատանքի: Կուտակւած եռանդի հոսանքը պիտի  
սպառել:

Հարւածիր, դէ, հարւածիր.

Եւ արագ, եւ յաճախակի.

Կտրիր, սղոցիր...

Դէպի մեքենաները:

Մենք նրանց յենարանն ենք. մենք՝ նրանց շնչա-  
ռութիւնը, իմաստը: Հազարաւոր աշխատողներ, յենա-  
րանների արգրկելի հրապարակ...

— Ե՞րգ...

Երկաթէ:

Մի, միակը:

Էլ արագ սղացէք, անիւներ...

Քար, մետաղ, աշխատողներ, ամենը հոսանքի  
մէջ խառնւեցին.

Պողպատէ հողմը, կրակէ փոթորիկը, մըրիկն  
Աշխատանքի...

Մի վայրկեան, միայն թէ միանդամից, ամբողջ  
հազարով...

Հարիւրամեակի երկաթէ դեղ մարդկային հոգով,  
պողպատի պէս ջղերով, ոէլսերի չափ ամուր մկաննե-  
րով:

Ահա նա:

Նա ձգտում է, նա կըմօտենայ, նա կըհասնի...

V

Մենք ԶեռնԱՄՈՒԽ եՂԱՆՔ...

Ի հարկէ, բաւական են բարեպաշտութեան եր-  
գերը: Համարձակ բարձրացնենք մեր վարագոյրը, եւ  
թող նւագէ մեր երաժշտութիւնը: Շարքերն ու ամ-  
բոխները յենարանների, հոռոմն անդքերկը երա-  
կոտ վառարանի: Ծանրացած ծորակները, վերելքներն  
ու վարէջները շնչառութիւնն են ամուր գարբնաւծ  
գլանների: Գաղերի պայթումը և ոյժը, լուս ճնշիչը—  
ահա մեր երդերը, կրօնը, երաժշտութիւնը: Մեզ մի  
ժամանակ հացի տեղ տւել են մուրճ և սախակել են  
աշխատել:

Մեզ տանջել են:

Բայց սխմելով մուրճը, մենք նրան ընկեր ենք  
անւանել, իւրաքանչիւր մի հարւած աւելացրել է մեր  
մկանների երկաթը, պողպատի եռանքը անցել է մեր  
հոգուն և մենք, մի ժամանակւայ ստուկներս, ձեռնա-  
մուխ ենք եղել աշխարհին:

Մենք չպիտի սաւասնենք այն խղճուկ բարձունք-  
ները, որոնք երկինք են կոչւում: Երկինքը ստեղծա-  
գործութիւնն է տօնական, ծոյլ, ընկած և հնագանդ  
մարդկանց:

Նայենք խորքերը:

Մետաղի և կըակի հետ շոգիով և գաղով փորենք շախտը, փորենք աշխարհում փառաւոր տունէներ, գաղերի պայթումով աւերենք երկրի խորշերի անանցանելի հարստութիւնները: Օ՛, մենք գնում ենք, մենք թաղւում ենք խորքերում, հազարաւոր պողպատէ գծերով կը կտրենք նրանց. լուսեղէն ջրվէժներով մենք կըլուսաւորենք անդրերկեայ անդունդները և մետաղէ ճողոցով կըլցնենք նրանց: Շատ տարիներ է, որ հեռանում ենք երկնքից, արեից, աստղերի ճաճանչից: Ճուլում ենք հողի հետ: Նա՝ մեր մէջ, մենք՝ նրա մէջ...

Մենք կըմտնենք հողը հազարներով, մենք կըմտնենք այնտեղ միլիօններով, մենք կըմտնենք մարդկային շարքերի ովկիանումներով, բայց այնտեղից դուրս չենք գայ: Դուրս չենք գայ էլ երբեք. մենք կըմեռնենք. մենք կըթաղենք, կըթաղենք մեղ անյագ վազքի և աշխատանքի հարւածի մէջ:

Հողից ճնւել ենք և կըվերազառնանք դէպի նա, ինչպէս ասւած է ճնուց, բայց երկիրը կըկերպարանափոխւի փակւած ամեն կողմից, առանց մուտքի և ելանցքների, նա կըլցւի աշխատանքի անլուռ փոթորկով, չորս կողմից պողպատով զրահաւորւած երկրագունդը կըդառնայ տիեզերքի կաթսան: Եւ երբ աշխատանքի եռանդի թթացումից չդիմանայ և պատոէ իր զրահը, երկիրը կըծնի նոր զոյացութիւններ, որոնց անունը էլ մարդ չի լինիլ:

Նորածինները չեն նկատի իրենց ծննդեան պայմումի մէջ կորած փոքրիկ ու ցածր երկինքը և միանգամից կըշարժեն երկիրը նոր տիեզերաձանապարհով կըփառեն արևների և մոլորակների քարտէզը, կըստեղծն նոր աստղագարակներ աշխարհի վրայ:

Ինքը աշխարհը մի նոր մերենայ կըլինէ, ուր կօսմուը առաջին անգամ կըդանի իր սեփական սիրուը, իր բարախումները:

Նա սլանում է:

Ո՞վ արեգակների հաղարաւոր վառարանների բոցերը կըմարի, ո՞վ շիկացած մթնոլորտների մնշումն ու պոոթկումը կըթուլացնի, ո՞վ կըչափաւորի մեքենավարուսնթագների սըընթացութիւնը:

Ինչպէս մատօրբային խարիսխ-հսկաներ, մոլորակները կատալութեամբ պարտւում են իրենց առանցքների շուրջը. չի ընդհատւի նրանց վազքը, չեն մարի նրանց կրակոտ սրտերը:

Կօսմուը սլանում է:

Նա չի կարող կանգնել, նա ծնւում է և մեռնում, նորից ծնւում, աճում, հիւանդանում և կրկին յարութիւն է առնում, ձգտում հեռուները:

Նա հասնում է, նա յաղթահարում է:

Ընկաւ, ընկաւ...

Խեղդում է, յուսահատւել է...

Բայց կրակը հալեցնում է ամեն ինչ՝ նոյնիսկ վիշտը, կասկածը, նոյնիսկ անյուսութիւնը... Եւ նորից կեանք, եռում, աշխատանք...

Կըլինի մի ժամանակ, երբ մատի մի հպումով կընդհատուի ամբողջ աշխատանքը, կըզարդացնենք մեքենաների շարժումը: Տիեզերքը այն ժամանակ կըլցւի աշխատանքի թրթոռուն արծագանքով: Եւ անյայտ թէ որտեղ ճնւած ակօրդները պիտի ճնշն գեն էլ աւելի մեծ, անտեսանելի և մտքից շատ հեռու նորիցոնների մասին:

Այդ բոպէին, երբ մեքենաները սառչելով պիտի հանգստանան պողպատէ վազքից, մենք նորից աստվածօրէն, թէ դեօրէն բայց աւելի ուժեղ, աւելի խելառօրէն ձեռնամուխ կըլինենք:

## VI

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Նա փլւում է, նա ընկնում է... Աշխարհը:

Դէպ' անցեալը նայենք և թողնենք:

Բաշասում եմ...

Միլիօնաւոր հայեացքներ դէպ' ապագան և բարձըր, ամբողջ ձայնով կառուցում եմ.

— Մենք բոլորս զործի ենք...

Մենք՝ հարիւր մզոն մարդկային մի շարան Ռւրալի բարձունքներում:

Քայլենք պողպատէ քայլերով Ուէլսի լանջերում, Արոտանք երկաթէ հիմնը Հոենոսի զործարանների կամարների տակ:

Տրանսվալցիք, ի լեռ...

Զիկագօի մեքենայագէտներ, դուք ամենի կամուրջ էք կառուցել ջրանցքի համար.

Բնաց թողէք նրա վրայով գնացքը և նա կընւագէ արֆայի նման...

Իսկ յետոյ ուրախ քայլերով ժողովի, տիեզերական հաւաքոյթի...

Եւրոպայի ամենալաւ հրապարակի վրայ: Վագում ենք հնալով...

Եւ հարւածեցէք միասին, մարդիկ, շշակներ, ճըռացէք, վառարաններ, զօղանջեցէք, քարէ անձաւներ... Թողնել... Սովորեցէք ձեր աղմուկն ընդհատել վայրկենապէս...

Եւ ձեռքներդ դէպի վեր, մեքենավար-բանուրներ... Բեկուում զեղունակալներին: Լիոներից բարձր...

Այստեղ ճախարակներն են: Ամառը գիշերներ չկան բնեռում. ու զեղունակալները կապոյտ լոյսի մէջ խաղում են որպէս ուրուրներ, երկնքից դէնն են անցնում և ու միբաժի կերպարանքով կանգնում են ջեռուցւած Սահարայի վրայ:

Ուժգնօրէն... Ուժգնօրէն զեղունակալներին:

Զարգենք...

Ծխենք...

Կոենք...

— Սրանք տներ են:

— Տունը՝ տան, սիւնը՝ սեան, դուռը՝ դռան վրայ, Նբկնքից բարձր մինչև աստղերը:

— Սրանք հաւքեր են:

— Մինչև լաւան, մինչև ջեռուցւած խելագարութիւն երկրի փորում ենք:

Իշխանական քաղաք է... Պալատների մի գունաւ Հեռացնել անպայման... Մեր ծրագրով այստեղ զով պիտի անցնի մի ծառուղի եղրւած կեռասի այգիներով... ամբողջ երպայով: Մայր ցամաքի վրայ զրօսանքը վատ չի լինի յոցնածների համար:

Այս բնչ տարօրինակութիւն է: Այստեղ անմիտ հողաթմբեր են, երկաթուղի:

— Հեռացնել այն հարիւր վերստով:

Բայց հանգիստ, — ուրբաղան րոպէ: Հազնում ենք բանուորական շապիկները:

Շշանք միանգամից ամբողջ աշխարհով:

Եւ հարւածենք ակնթարթի պէս:

Խարխուլ արհեստանոցների տակ, ամենուրեք դրւմն են ուժանակները:

— Պայթեցրէք աներկիւդ:

Նրանց հետ թաղեցրէք անծուխ և անաղմուկ բարձրները.

Իսկ յետոյ հաւաքեցէք բոլոր լաւագոյն գործարան-հսկաներին, եռացող հնոցներին, համարձակ կամուրջներին, աղաղակող ծորակներին, անգրկելի շէնքաշարքերին, հաւաքեցէք նրանց քարէ, երկաթէ միտիւգի...

Եւ հազար վերստ երկալութեամբ,

Հարիւր վերստ լայնութեամբ.

Առեղծւածային-հսկայական գործարանը կառուցենք...

Համաշխային ուրախառիթ կոնդրէս աշխատողների,

Նա ինքը շշմել է իրենից:  
Ահա նա, նա բոն է, նա կառուցւած է:  
Նա ծխի մէջ է, նրա տաք շնչառութիւնը ար-  
դէն արրեցրել է միլիօնների:

Սըհստանոցներից հազարաւոր մարդիկ գալիս  
են կենդրոնական տանիքները տեսնելու.

«Չարքի, չարքի ոյժն ու դիմադրութիւնն ենք  
մինք ուղում...»:

Անմեղ պատանիները սրտապնդւած աշխատանքի  
երգերով աշխատողների մըցումն են կամենում:  
Տանիքը փլւեց...

Դարբնոցի խորքից բարձրացան աշխատանքով  
լցւած գորշ բետոնները, ծանրաբար դողացին և ամ-  
բողջ միլիօնները մարդկանց լցրեցին մկանների  
դողքով.

Շատուններ, շատուններ մեզ անյապաղ... Փո-  
խեցին ճակատը պատանիները:

—Պողպատ է... Մենք կամենում ենք անձնա-  
տուր ինել այս ակնթարթներին:

—Ոյժ և վերելք...

Օդում ծածանւեց ճնկաւոր հսկայական վալը և  
նրա հետ կապոյտ արնով լի շատունները:

Նրանք կատաղել էին և ծնկային շշուկներով  
լցնում էին կամարները, բակերն ու տունեները դոր-  
ծարանի:

Ամրոխը սառեց և յետոյ միանգամից բղաւեց  
խենթօրէն.

—Բոլորը,

Եւ հպումը,

Եւ հարւածը,

Եւ վերելք.

Ամրող մարդկայնտունը իբրև նւէր, իբրև  
մըցանակ և իբրև հողի տալիս ենք...

Չեզ՝

Շատուններ,  
Ամրոխը խմբում էր,  
Փառահեղութիւնն զգացին նոյնիսկ ծանը և գժւա-  
րին աշխատանքերով արհստանոցները:

—Կիրք, անսանձ կիրք...

Սըբեր չենք մենք, սատանան վերցնի:

Ամրոխի մի ծայրից բարձրացաւ մրոտ և քրանա-  
թոր քեռին և խոպոտ ձայնով բղաւեց ամրոխին.

—Հէնց ես գելեկատ հմայնտեղից:

Հասարակութեան մի մասը ծիծաղից: Այդ այն  
բանւորներն էին, որոնք աշխատում էին բակի ներ  
սում:

—Մի գոռայ, այստեղ եկէք:

Պողպատաձոյլ արհստանոցների դարպասները  
ունոցով բացւեցին և միացան պատերին:

Չուլարաններն ու վառարանները վնաստում էին  
հսկայական շների պէս:

Վառարանի բերանում այրւում էր ճարճատելով  
նաւթը և թւում էր թէ յօշուում էր ինքն իրեն:

Վարպետը շարժեց ձեռքը, վառարանի բերանը  
բացւեց, ամրոխը լոյսից և տօթից հարկադրւած յիտ-  
յետ քաշւեց:

Նա չէր նայում, տքնում և տանջւում էր օդեղէն  
լաւայի խուրձերում:

Դժոխային ազմուկի մէջ չի կարելի խօսել, բայց  
մկանների կծկումները բոլորի մօտ էլ միենոյն բաներն  
էին ասում:

—Աղօթքի, աղօթքի... բղաւում էր բթացած  
ամրոխը և հանդիսաւոր խմբերով թեքւեց դէպի լայն-  
արձակ և բարձրագիր կաթսայաձոյլ գործարանները:

Ճանապարհին ամրոխին դիմաւորեցին նիհիլստ  
քարողիչներ.—Միթէ դուք նորից հաւատում էք  
Աստծուն:

—Դատարկութիւն, մինք նոր կռապաշտներ ենք.

մենք կամենում ենք փառաբանել և երկրպագել մեր ստեղծածին:

Մտան կաթսայաձոյլ գործարանները։ Հազարա-  
ւոր ցըւած մարդկանց սև կամացների և հազարաւոր  
հարւածներոր երկաթալարերի։

Հանգըլին բոլոր լապտելները, բացի վերին  
երկուսից:

**Եւ միանգամից խաղաղութիւն:**

Մոայի փառահեղութիւնները սիւների.

Առ զրւածութիւնը ստւերների:

Հրահնանգի ոչ մի խօսք, կոչի և ոչ մի ձայն, ամբոխը խոնարհեց երկաթի զուրտ քաղաքի առաջ:

Եւ կային արցունքներ,  
կար և հրճւանք:

Կ Ե Ր Ե Լ Լ Օ Գ Ե Ց

11

Կ Ա Շ Մ Ե Ւ Շ Պ Ե Տ Ա Շ Վ Ա Շ Վ Ա Շ

Ես սիրում եմ քեզ, հսկայական քաղաք, միծ  
քարակառույթ երկաթի հնտ:

Սիրում եմ քեզ, երբ անզրկելիօրէն մնացած զու  
անհանգիստ նետում ես, փոթորկւած հուր երազնե-  
րով. բարձր ձգում մասրի հեթեաթմանը...

Ես սիրում եմ քեզ, երբ բջաշունչ մըրթիկը անց-  
նում է քիզնով և ապստամբութեան արնոտ արշալոյ-  
սով ներկում են քո փողոցներ...»

Քաղաք, ևս սիրում եմ քեզ, որովհետև կամուրջն  
ևս ձգւած դէպի մարդկութեան յաղթանակն ու աղա-  
տագրումը:

Քո երգեցիկ ահազանգերի կոչին, կուբացնող  
կրակներիդ փայլից կախարդած բոլոր կողմերից մի-  
վօնաւոր մարդիկ դէպի քեզ են շտապում, որ զոհա-  
բերեն իրենց մարմինը, արիւնն ու ուղեղը, որպէսպի-  
այրւեն քո մեծ, կերպարանափոխող հրդեհում...

Ես լում եմ անընկճելի մուրճերի ներդաշնակ զարկերը. — դա հսկայական դարբնոցն է, ուր դարբնում է նոր՝ բերկրալից կեանքը. դա հուժկու սիմֆօնիան է աշխատանքի, երկ սթի և պողպատի...

Ես տեսնում իմ չողեանւած, կախարդիչ արշալոյնիքը:

u q u q u s h v

Ես լսել եմ այս երգեցը մօտաւոր ու բերկրավից  
դարերի,

Նըա ձերժակ, անզրկելիք քաղաքների մըրկում  
Ես լսել եմ այս երգերը գալիք շահոց ու ոս-

կեփայլ օրերի  
Պողպատների աղմուկի մէջ, գործարանի ճի-  
շերում:

Ես տեսել իմ ինչպէս ուկէ պողպատն է իմ ըն-  
հեռ մունջ իւեւ,

Այդ վայրկեանին բացւող այգին շընք դէմքն եմ  
պաշտին ..

Ես գիտցել եմ, որ իմաստը այս աշխարհի այն  
մռնածութիւն է,

Այն ամբակուռ և յամառաշրթ բազուկներում  
յաղթական:

Ուրբան հնչեղ մուրճը ուժեղ կըճէ, կարէ և կոէ,  
Այնքան շքեղ հրճանք կըդայ աշխարհի մէջ նոր  
լուսով:

Որքան ուժեղ շարժւեն լարերն ու անիւններ,  
Անոան պետք է մաս տառա ահակ մասւեն մեր

*o p b r :*

ԱՐՄԵՆԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Այդ երգերի կանչը իշխող, կարմիր ու պարզ  
կոչնակի վառ,  
Տես, յայտնում է, որ վախճանն է երկարաձիգ  
գիշերների երազներին մահացած...  
Այդ երգերի կանչը հուժկու դէպի արևը կը ձայնեն  
ու պայքար,  
Կանչը հպարտ ու զայրացկոտ, չար ու տանջող  
մեր բախտի:

III

O S U R Ե Վ Բ Օ Ր Ս

Օտար իմ ընկեր, ցաւատանջ եղբայր,  
Թշւառ ու յոզնած, դու՝ նկնւն զինւոր.  
Մինչ ջահէլ կուրծքդ թաղւած արեան մէջ  
Ռումբերի որոտից վաղուց խլացած.  
Լսիր ինձ, լսիր...  
Պէտք է հրճւանքը յետ տալ աշխարհին  
Եւ չնչել ազատ, անկաշկանդ կըքով.  
Միթէ կարծում ես, որ թշնամիդ եմ ես:  
Ես, որի համար հարստութիւնը  
Տանջանքից սմքած բազուկներն են այս,  
Միթէ կարծում ես, որ թշնամիդ եմ ես:  
Տես, ինչի փոխեց աշխարհը սիրուն.  
Վէրքերով ծածկւած դիակ է կարծես,  
Իսկ պատերազմը անհղ շուրթերով  
Արիւն է ծծում վամպիրի նման:  
Մեր խմած ջրը կարմիր է ներկւել,  
Երկինքը բոլոր արիւն է դարձել,  
Եւ քաղաքներն են միւնում հրի մէջ.  
Մնջել է խօսքը արտաքսւած սիրոյ:  
Ընկեր, լուսաւոր ազգանշանն է  
Սարսափն է թեքում դէպի իր վախճան.  
Բարձրացներ այդպէս դրօշակներ կարմիր,  
Բարձրացներ պողպատ մուրճերը հսկայ:

Ընկեր իմ, եղբայր, բաւ է տղառապլ.  
Ելիր,— այսպէս աշխարհը կաշկանդող,  
Նանիր, խայտառակ շղթան խորտակենը  
Եւ թող որ երկրի հարթավայրերում  
Զքանան մուրացիկ հաշմանդամները խեղճ:  
Բաւ է խողխողել, ծ, բաւ է մեռցնել,  
Խորտակիր և այդ խաբէութիւնը սկ.  
Ամբողջ աշխարհի հալածւածների,  
Ընդհանուր մայրն է երկիրը բոլոր...

IV

Գ Ա Լ Ի Ք Պ Օ Է Ի Ն

Դալիք օրերի հանճար լուսաւոր,  
Դու՝ գեղցկութեան ոգեշնչնչ պօչտ.  
Ոգեսութեան թեաւոր աստւած,  
Քեզ ողջունելով իմ անուրջներն են երգում  
այնպէս:  
Եւ երեկոյեան խաղաղ ժամերին թեքւած քո գրքին,  
Լսելով դողդոյ և ալիխառն և հեռաւոր անցեալին,  
Կըլսես միշտ անմեռ հնչող ձայները նրանց,  
Որոնք անցած գարերում կնանգչին...  
Ստեղծագործութեան հուր անուրջներով կեանք  
կըտաս նրանց,  
Բարբիկաղների արիւնով ներկւած օրերին նորից,  
Եւ հուր հրճւանքին կուի, պայքարի և յաղթանակի  
Եւ սարսափները տխուր պատմութեան:  
Ես գիտեմ շատ բաներ անցեալի խաւարից  
Զգայուն հոգիդ պիտ վիրաւորեն.  
Շատ բաների պատասխանը չես գտնի երբէք,  
Ինչ այժմ փոթորկում և տանջում է մեղ.—  
Բայց կայ մէկը, որի առաջ կըխոնարժես դու,  
Լցւած հրճւանքով և բերկրանքի յոյզով,  
Որին պիտի տաս ամենալաւ ծաղիկները  
Երգեցիկ յոյզերի, հրճւանքի ոգեսութեան:

Մերթ փոթորկոտ կիրք, մերթ մորկումն հպարտ  
ոյժերի,  
Որ մահւան ժամը ժպտով են հանդիպել,  
Որ տանջող մթութեան մէջ գերեզմանների  
Անմահ պատկիրն են տպագային հիւսել.  
Մերթ մեր մտքի թոփչքն համարձակ,  
Մերթ բոցերը վշտի, շղթաներին օտար,  
Ցոյզերի հուրը, վասող սառուցները մութ.  
Ամօթով, արեամբ ներկւած դարերի.  
Եւ դու կըզգաս՝ ինչպիսի խելագարութեամբ  
Նետել ենք հոսանքը բորբոքւող կուժի,  
Որպէսզի շուտով խաւարի շղթան խորտակենք  
Մերձեցնենք օրը սիրով բոցավառ...

• . . . .  
Ի՞նչպէս երջանիկ եմ ես, որ կարող եմ ես  
Ճաշակել բաժակը յաւէրժ փառքով շղարշւած.  
Եւ հրավառ երգերում ոգեշունչ ձուել  
Նրանց մտքերը հպարտ, նրանց ցողքը փառահեղ...

V

ԵՐԿԱԹԵ ՄԵՍՍԻԱ

Ահա քրկիչը—տէրը աշխարհի,  
Տիտան ոյժերի իշխանը հզօր.  
Պողպատ անիւի աղմուկների մէջ:  
Եւ էլեքտրական արևների մէջ.  
Կարծեցին կըզայ աստղացանցերով  
Եւ աստւածային գաղտնիքների ճաճանչ պսակով:  
Իսկ նա եկաւ գործարանների ծխի մէջ կորած:  
Կարծեցին կըզայ փայլով, արցունքով  
Խոնարհ ու պատկերը քնքուշ, սիրտատ.  
Իսկ նա հրգեհւած լաւայի նման  
Եկաւ բազմադէմ և փոթորկոտ:  
Ահա քայլում է ծով անդունդներով  
Պողպատէ աննկուն քայլերով,

Փոթորկոտ մտքերի կայծերն է ցանում,  
Մաքրող հրդեհի կրակը սփսում:  
Որտեղ էլ հնչէ ձայնը նրա իշխող,  
Երկրի խոռոչներն են բացւում,  
Լեռները նրա առաջ յետ-յետ են քաշւում,  
Եւ բեռներն են մօտենում իրար...  
Որտեղով անցնի—հետքերն է թողում  
Երկաթակուռ արահետների.  
Բոլորին բերում է լոյս և խնդութիւն  
Ծաղիկ է ցանում անապատներում:  
Եւ նոր արև է աշխարհին բերում,  
Դահերն է փլում, և մութ բանտերը,  
Եւ եղբայրութեան անմեռ կանչում է մարդկանց  
Զնջում է զծերն ու սահմանները:  
Նշանն է կարմիր—ազդակը կուի,  
Փարոսը փրկիչ կեղեքածների...  
Նրա հետ պիտի մենք յաղթահարենք  
Լուծը մեր բախտի, գերիչ գրախտի իշխողը  
լինելով:

VI

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դալիք երջանիկ, ուրախ դարերի  
անմեռ մարդարէ.  
Թևաւոր մտքի բոցավառ տիտան,  
Դու՝ որ նետել ես մեր մունջ աշխարհին  
կանչղ փոթորկոտ,  
—Ամբողջ աշխարհի հալածւածներդ,  
Ապստամբեցէք:  
Դու՝ իմաստունդ, որիդ թոյնն է որ  
Մահացու ումպով  
Խմել է հսկայ հրէշը կապիտալ.  
Օ՛, կին աշխարհը մօտաւոր մահւան  
Սոսկումից, ցաւից ճչաց, հեծկլտաց...

Պրակէս կայծակի պտոյտը բոցոտ,  
Պրակէս արել մութերը ցրող,  
Դերող ուսմունքիդ խօսքերում անմահ  
Փրկիչ փարոսն է վառւում մեզ համար...  
Քո անուրջները կարմիր հաւքերի  
երամի նման  
Խնդումի շնչով աշխարհ թափեցին.  
Նրանց հանդիման՝ որպէս արնավառ  
Յուքը փայլակի,  
Ապստամբութեան խարոյկներն անմար  
երկինք բարձրացան,  
Շքեղ Մոսկւայի բարբիկադների  
Սարսափների մէջ  
Այն ահեղ ժամին, այն քո հոգին չէր  
Այնտեղ սաւառնում...  
Փարիզ... Կոմմունա... կարմիր Պետրօգրադ,  
Դեռ մի անգամ չէ, որ պիտի յուզեն  
Ականջները մեր...  
Արեգակնային գալիք դարերի  
Անմեն մարգարէ,  
Յաղթական մտքի բոցավառ տիտան,  
Օ՛, դու աշխարհին քո կանչն ես նետել...  
— Ամբողջ աշխարհի պրօլետարներդ,  
Շնուտ, ոտքի ելէք:

### ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՄՈՐՍԿՈՒՑ

I

Թ Ա Ղ Ո Ւ Մ

Մերկ զլուխների անծայր ովկիանոս...  
Ազմկոտ հոսանք... Տրորւած կասկած...  
Վարդերի մի ծով...  
Ծաղիկ, պսակներ  
Եւ պլակատներ...

Դէպի անստեղծ վէս բարձունքներն են  
սրտերը ձգտում,  
Եւ անողոք է ալենկոծումը  
Այս անթիւ մարդկանց.  
Եւ բոսորդիայլ զրօշակներին՝  
— «Կուիր մինչև վերջ»,  
«Յաւերժական փառք ընկած հերոսին»  
Անցնում, գալիս են կուռ յիսնակները  
կարմիր Բանակի.  
Երկաթէ քայլերի յարաճուն ծովն է  
Անսահման աճում.  
Այն յաւերժական մեր ազատութեան  
անյաղթ բանակի  
Խըստ զօրքերն են գալիք դարերի. .  
Փողփողում է սեինի վրայ զրօշը կարմիր  
Խիտ շարքերի մէջ յեղափոխութեան  
Ոյժն է միշտ անպարտ...  
Իր յաղթ շարքերի երաժշտութեան մէջ  
Զօրքը պատում է հերոսին ընկած,  
Որի դագաղը վարդերում թաղւած  
Զեռքերի վրայ բերում է յուզւած...  
Այնտեղ ծածանող զրօշակների  
կարմիրն է ծորում դագաղի վրայ,  
Անծայըրութեան և մարդաշարքերի...  
Եւ փառաշուր են խմբերը զօրքի...  
Բոլորի գէմքին տանջանքն է սառել  
Հայեացքը նոցա փայլում է որպէս  
Պողպատը սրտի.  
Մոայլւած լուռ են պալատ, տաճարներ  
և հսկայ շէնքեր...  
Հոռում են, լոռում...  
Ժամացոյցների աշտարակներից  
Թւացոյցերն են արնոտ պսպղում  
Եւ զգուշօրէն հնչում են կամաց...  
Մարդաշարքերն են մասախուղներում,

Ծաղիկ, պսակներ, վարդ, պլակատներ...  
 Փայլում են յոգնած գէմքները տանջւած.  
 Այրող թախիծով կըքերն են վառւած,  
 Բայց անբաժան են պողպատով կուած  
     շարքերը մարդկանց...  
 Եւ ինչ որ մի տեղ հրանօթների  
     որոտն է լսում...  
 Պատիւ է, պատիւ, պատիւ. հերսոխն,  
     ընկած մարտիկին...  
 Բոլորին պատեց սարսուով վսեմ,  
     երբ երդը հնչեց.  
 Նոր հղանակով սրտերը լցւան...  
 Նոր ապրումներով ամբոխը յուզւեց.  
 Իսկ արձագանքը. — Կոիւ մինչև զերջ,  
     Մինչև յաղթութիւն, մինչև յաղթանակ.  
 Եւ այդ ձայներից ամուր խմբւեցին  
     սւիները յաղթ.  
 Մի ինչ որ տեղ էլ յաղթական զանգը.  
     ծանը զօղանջեց...  
 Խորհրդից՝ վարդեր, խորհրդից՝ դրօշակ,  
 Միութեան ծաղիկ, միութեան պսակ...  
     Սրտերում այրող վիշտն է հրավառ  
 Եւ կուրծքը ջարդւած զաղիր տանջանքից.  
 Բայց ամեն ինչ էլ վառ ճաճանչներով  
 Եւ անսովոր է, եւ վեհ, լուսաւոր...  
 Սովորականը կորել է կարծես...  
 Փողոց, հրապարակ, տներ խանութներ  
 Ժողովրդական յորձանուաներում  
     եռում են ահա...  
 Բոլորն էլ թաղւած այս բաղմամիլիօն  
     աղմուկների մէջ,  
 Բոլորն են տարւել նոր հրաճաճանչ  
     վշտերով անմար...  
 Բոլորն այրւել են վառ ձգտումների

մըրիկներում  
 Բոլորն են հրճւել յաղթանակների  
     կըակների մէջ.  
 Սրբելով խելառ խննթութիւնները  
     Անմիտ հաւատի,  
 Եւ խորտակնելով ամրութիւնները  
     Դաժան օքէնքի...  
 Բայցել են աների գուշնու ու պատուհան.  
 Մեր թշնամիներից պատշգամբները  
     Սկին են տալիս,  
 Նոքա սոսկում են ժողովրդական  
     Ճոյցի կոհակից.  
 Խոնարհ սբտերը վախով են բռնւած...  
     Խնտէրնացիօնամլ...  
     Այնտեղ հոհառը  
 Սրտերն է թափում կըակոտ խօսքերի  
     Երկաթն արնավառ.  
 Մի տեղ լսում է յաղթ մարսելեօպը...  
 Սուր ակնթարթով ամեն մի քայլն էլ  
     հնչում է ուժեղ.  
 Բարձրացրեց մէկը դրօշակն իր ձեռքի.  
     Երգում են, երգում.  
     Թնդում է, թնդում:  
 Խոր լրութեան մէջ փողոցի ծայրում  
 Ինքնաքարշները կանգնել են միջած.  
 Դրօշակներն ընկան և խոնարհւեցին.  
 Այստեղ հերոսին հողին յանձննեցին...  
     Ցաւէրժ յիշատակ:  
     II

### ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԴԱՐՈՒԻԾ

Աշխարհում չկայ բարձրը տիրողից,  
 Համերաշխ ոյժի իշխանութիւնից.  
 Զկայ աշխարհում բարձրը խնդումից,

Արև. Կէքեաթի երջանկութիւնից:  
 Կրակից փայլող մեքենաների  
 որոտների մէջ,  
 Եւ անիւների պտոյտների մէջ,  
 Ուզ անուըջներն են քարանում, մնջում,  
 Աբցունքով ցողւած ժամանակների  
 ըլջանակի մէջ  
 Գեղեցկութիւնը դեռ գեղեցկութեան  
 ներբողն է միայն:  
 Սպասումները մեր ժամանակից,  
 Երկրի յոյզերը՝ երկնակամարներ,  
 Իր արիւնի մէջ աշխարընէ մեսնում  
 Եւ սպասում է մշուշների մէջ  
 Իր ազատութեան վառ արեգակին...

### ԼՍՍԾԻՑՆԻՒՑ

ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ  
 1

Տանջող ձայների խմբերգն անկանոն,  
 Շանր դեի նման հա ոշոտում է  
 Եւ հեծեծում է աշխատանքը սկ,  
 Շուրջը՝ ուժասպաս, մոայլած դէմքեր,  
 Խորը հառաջներ, համը տրտունջներ  
 Եւ կաթիրները այրող քրտինքիւ  
 Նայիր կոշտացած այս բութ ձեռներին,  
 Դուլ լարւածութեամբ մկաններն ուռած.  
 Այստեղ չգիտեն մարդիկ թէ ինչ է  
 Շարումն առանց ցաւի.  
 Ուռենու նման այստեղ բոլորն են  
 Կոացած դէպ' ցած:  
 Ահա արշալոյս, — ննոցն է եռում,  
 Զեռուցած մետաղ ծանր տնքոցով  
 Յենարաններում ուժասպաս եղած  
 Խարարուղում են, տաշում են, յղկում,

Մերթ էլ զնդանում քերոցին յինւած  
 Քսում են, քերում:  
 Դարաւոր կոպիտ մետաղը ժանգոտ  
 Ուեղ ձեռների շարժումով զուգւած,  
 Որպէս թէ դժկամ հիւրը տօնական  
 ամբոխի առաջ,  
 Ահա փայլում է դահլիճում...  
 Որպէս սառոյցը արծաթազօծած  
 մետաղն է փայլում...  
 Ամբոխն է հրձւում, դեռ նա չգիտէ  
 Որ այդ փայլի մէջ դժկոյն հայեացքներ  
 Շատ, շատ կան մնջած...  
 Որ նախատինքն է հառաչանքի հետ  
 Դողում փայլի մէջ...  
 Որ զարդարանքում սև աշխատանքի  
 Քրտինքն է հոսում հեղեղի նման...

### II

Կ Ո Չ...

Ովկիանի նման, Էյ, անծալրածիր յուզւած  
 ամբոխներ,  
 Ես ձեզ եմ կանչում այս ահեղ մարտի վճռական  
 ժամին.  
 Արձագանք տւեք դուք մըրկալի իմ այս կոչերին,  
 Դուք՝ որ այրւել էք փոթորիկներում դեռ ման-  
 կութիւնից...  
 Փոքր եմ ամենից, բայց և կրգենի այրող բոցերում  
 Հողիս կարծրացաւ նոր կոտորածի, նոր վէրքի  
 համար.  
 Օ՛, նա կարծրացաւ ահեղ ու վերջին հարւածի  
 համար.  
 Խոշտանդուածներդ ամբողջ աշխարհի, շնւտ, ոտքի  
 ելէք...  
 Ողջ երկրագումատը այրւում է ահա երկաթի գրկում.

Իսկ նոր աշխարհը եռում է կասես նրա բոցերում։  
Միթէ դուք չունիք թափը վրէժի, անմեռ զայ-  
ըոյթի,

Որ դուք էլ փշրէք այս մահասարսուտ տանջանքի  
շղթան...

Յուղած, փոթորկող ովկիանի նման յաղթ,  
անծայրածիր,  
ես ձեզ եմ կանչում, ամուր սղմելով դաստակը  
սրի,  
Դէպ ձեր անցումի, ապստամբութեան մի նոր  
ճանապարհ։

Եւ ձեզ եմ նետում այրող պսակը իմ թարմ  
վէրքերի...

III

ՆՈՐ ՀՆԿԵՐՈՁԸ

Բարձրացաւ պտտող անիւի քամին,  
Սկսեց պարը կատաղի գօտու.  
Ընկեր իմ մտերիմ, դու մի սարսափիր...  
Թող շչայ քառոր պողպատ աշխարհի  
Եւ թնդ կանէ ծովը արցունքի.  
Շատ կրակներ են մարել ու խամրել...  
Դու մի սարսափիր...

Պարզ առուների և լայն դաշտերի  
Խաղաղ ցօղերից եկել ես այստեղ.  
Ընկեր, մի սարսիր և մի վախենայ.  
Այստեղ ձուլւել է անսահմանը յաղթ.  
Եւ անկարելին կարելի դարձել...  
Գալիք օրերի նոր արշալոյսին.

Դու մի երկնչիր...

Ճերմակ սանրերի փոթորկի թեին  
Երջանկութիւնը մեր վեր բարձրացաւ.  
Վշտի, խաւարի անծայր աշխարհում  
Հզօր արեն էլ տանջանքից վառւեց

Եւ ուժեղ է նա, ուժեղ ու անմար.

Դու մի վախենար...

Որպէս հոսանքը՝ քարի, պողպատի,

Շարանն է հոսում սկ գօտիների.

Թնդ ուժեղ լինի աղմուկն անիւի,

Մեր հին շղթային նոր օղակ կըցւի...

Բայց մեր գնդերը խմբւել են արդէն.

Դու մի սուրսափիր...

IV

Կ Ի Ն Է

Թողած մեծարքը ծաղկի, ծանօթի

Եւ գեղգեղանքը ծորող երգերի,

Եկել ես մեղ մօտ, մեր շարքերը նեղ

Տեսնելու արցունք և տանջանքը մեր...

Ոչ ոք մեղանից քեզ դեռ չէր տեսել,

Դու շատ հեռուից ես մեր խօսքը լսել,

Եկար, իսկ այնտեղ մեծարքն էր եռում,

Երջանիկ երգը ախորժ հեծեծում...

Ցանկարծ հայեացքդ ցնցեց ամենքիս.

«Օ՛, այստեղ կին կայ»—մէկէն դոչեցինք,

Եւ այդ բառերի պոռթկումը վառեց

Քո հոգու խորքում հրդեհը թախծի,

Եւ դու բարձրացար գոնսատ ամպի պէս,

Ժպիտներիդ մէջ զայրոյթդ խիստ պարզ.

Եւ մենք մնջեցինք—այդպէս պարդ օրին

Անկարծ ամպի հետ մըրիկն է սահում.

Ցայնդ էր գողում անհանգստօրէն

բոլորիս սրտում,

Եւ խօսքդ որպէս պողպատը զբնգուն,

Փափուկ ճեռներիդ շարժումներն անվախ

Եւ քո հայեացքը հաւատ աղերսող

Ամեն ինչ ասին ոչ ստրկարար,

Մյլթէ զայրոյթով գողդոջ շուրթերի.

Զահէլ յոյզերը ընդպաման մասին,  
Եւ քեզ ուղղւած անտեղի ծաղրի,  
Հաւասար կուող մարդու իրաւանց,  
Եւ քո դարաւոր տանջանքի մասին,  
Պայծառ վախճանի անգուսպ ծարաւի,  
Հանուր յոյզերի, սպառումների,  
տենչերի մասին...  
Եւ շատ երկար էր քո ձայնը հնչում,  
Իմ ընկերները ապշած լուռ էին,  
Իսկ ես հրճւանքի վշտու արցունքով  
Կլանում էի խօսքերն այդ քո.  
Մտածում էի՝ որքան զիտէի,  
Փոթորկու կեանքի շնչի մէջ մեռած,  
Կեղծ իդէալներին այնքան սիրահար,  
Սուստ տանջանքներով տառապող մարդկանց...  
Եւ ձեզ՝ մայրերիդ, և ձեզ՝ հնազանդ  
Ժպտացող կանանց, և ձեզ, որ այդպէս  
Դէն էք շպրտել տանջանքի շղթան՝  
Համարձակ մտել մեր փշոտ ճամբան...  
Եթէ նրանք էլ կարող լինին  
Այդքան ուժգնորէն և հպարտ շնչել,  
Մեր անուրջները շուտ կըծաղկէին  
Եւ այս խաւարը շատ շուտ կըմեռնէր...  
  
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Ս Է Ր Ը  
(Հ. Կլիավս-Կլիավինա)

Աշխատանքի օրերի շարանը տրտում  
Անցնում է ոլորում թելը տրտմութեան...  
Միտքն է հոգում առօրեայ հացը  
Յամառ աշխատանքով գտնելու համար.  
Կոշտերն են կրծում ձեռները յոգնած,  
Եւ բաղմանում են տանջանքներն այս...  
Անմեռ խաւարը, կարօտ տրտմութիւն—  
Ճակատագիրն է քո բանտորական...  
Սակայն քեզ էլ տրւած է միշիթարութիւն.

Մօտ է արեգակնային օրը փրկութեան  
Եւ սկ կսկիծը կրծքիդ տակ խեղդւած,  
Ցիշիր մեքենան, ընկեր իմ յամառ...  
Վիճակով կոպիտ—օրն աշխատանքի.  
Միայն նա է որ քեզ հետ է ապրում...  
Լուսաւոր երջանկութեան գագաթը ոսկեայ  
Դու ձեռք կը բերես լոկ մեքենայով,  
Եղել են անսիրտ ու խիստ սկ օրեր,  
Եւ դժկամութեամբ գօտին է շաշել.  
Մնջել է ցաւից քո կուրծքը յոգնած,  
Սիրտդ սեղմել է ցուրտ կսկիծը:  
Այդ վայրկեաներին դու պատրաստ էիր  
Անիծել աշխարհը յինարանների,  
Տանջանքների աշխարհն խեղճութեան  
Որ դու թաղել ես անուրջները քո...  
Բայց երկաթէ ձուլւած երգերում  
Քեզ բացւել են լուսաւոր արշալոյսներ:  
Դու իմացել ես, որ անիծելով  
Անզիտակցօրէն դու սէր ես ծնել,  
Կոպիտ, անոելի գործարանը,  
Ասընկճելի, երկաթ ոյժերի այդ զոռ աշխարհը,  
Արցունքով քրտինքով ողողւած,  
Քեզ սիրել է  
Իր անսիրտ սիրով:  
Օ՛, սուրբ սէր Աշխատանքի,  
Դու ծնում ես մեծ ոյժեր—  
Ցըելու խաւարը յոգնեցուցիչ  
Փշըելու շղթաններն յաւէտ...  
  
Լատիշերէնից թարգմանեց Կիրիլլով  
Դ Ա Ր Բ Ի Ն  
Բռնելով ձեռքիդ կոանը ուժին,  
Երկաթի գուղճն է աշխոյժով ծեծում...  
Շուրջը խաւարն է... Մահացու ցուրտը  
Նրան վախճան է կոռում...

4094

Բայց ուժգնօքէն նա մետաղը յամառ  
Գերող հարւածով է կոփում  
Եւ ցանելով կայծահատիկներ,  
Նա գուղձին նոր ձև է տալիս...  
Նորից մի հարւած և զբնգում սուրը  
Նա կոել է կէս գիշերին խուլ-մունջ...  
Ելիր, կենսամարտ զինուր,  
Պատրաստ է ուղեկիցդ ուղմական...

Իլիս Իօնով

**Ա. Գ. ԵՓՐԵՄՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (ԳՕՐԵՄԻԿԻՆ)**

(Իվան Երօշինից)

Դու, աշխատանքի մարտիկ, քաջարի մեռաբ  
անաղատ,  
Թնդանօթների բոմբիւնների տակ նիհեցիր  
յաւէտ.  
Եւ ինչու ընկար, ինչու դուրս ելար մահւան  
ահեղ դաշտ,  
Դունելով հանգիստ, ինչու պառկեցիր դու ան-  
ժամանակ...

Ծածկւած է քո դին, ուր է դամբանդ, երբ որ  
չկաս...

Միթէ գիշատիչ անգղները ու քեզ յօշոտեցին.  
Հայեցքդ վճիտ ուրտեղ է ծածկւել վախճանից  
դաժան.

Որտեղ ընդհատւեց ազատ թոփքը աղճատւած  
մտքիդ.

Ծանը է հաւատալ տխուր վախճանիդ այս ու  
համբաւին.

Հեռացէք, կորէք դուք, մըտքս յուզող թունա-  
ւար օձեր...

Մէծ է կորուստա, այս ահեղ ճամբում ես ում  
չեմ կորցրել...

Ախ, անօտեման է տրամութիւնը իմ... ես քեզ  
եմ կորցրել...

2013

Սրբազրութեան անփութութեան պատճառով սպրտել  
են մի շարք աններելի, յամառ միտքը աղաւաղող  
սխալներ, որոնք՝ տեխնիքական գժվարութիւնների  
պատճառով՝ անկարելի է ուղղել և կուղան միայն  
երկրորդ սպագբութեան ժամանակը.



504

ԳԻՒՆ Է Ռ.

ԴԻՍԼ ԳՐԱՎԱԶԱՐԵՐԻՆ